

ԱՆՏԱՌՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ա. ՂՈՒԼԵԱՆՅՈՒ

(Отчетъ по мѣстному управленію министерство государственныхъ имуществъ за 1891 г. Составленъ V отд. Лѣснаго Департ. С.-Петербургъ 1893 года).

Այս օրերս լուս տեսաւ Անտառապին դեպարտամենտի տարեկան հաշիւը 1891 թւականի վերաբերմամբ: Քաղում 'ենք նրանից մի քանի տեղեկութիւններ, և նթադրելով որ նրանք անհետաքրքիր չեն լինիլ մեր ընթերցողների համար:

Մինչև լուծւարի 1-ը 1892 թւի Ռուսաստանի անտառների ընդհանուր հրապարակը, որ գտնուում էր գանձարանի անմիջական հսկողութեան ներքոյ, — հասնում էր 227,700,000 դեսետինի¹⁾: Այդ ահագին տարածութիւնից 108,000,000 դեսետինը պիտի անպէտք համարել անտառապին բուսականութեան համար, քանի որ նա բռնւած է լճերով, ձահիճներով, քարերով և աւաղով, իսկ միւս կողմից անտառապին տնտեսութեան էկստենսիւ բնաւորութիւնը շատ դժարութեամբ է հաշտւում մեծ մեծ ծախսերի հետ — ալդ բոլորը օգտաւէտ դարձնելու համար: Անտառների ընդհանուր հրապարակը արտապատող ալդ խոշոր թիւը տարուց տարի շատ թէ քիչ փոփոխւում է: Նոյնը կարելի է նկատել և 1891 թ-ին, համեմատելով նրա տեղեկութիւնները նախորդ 1890 թւականի նոյնաման տեղեկութիւնների հետ, — մենք կը տեսնենք, որ նրա հրապարակից պակասել է մօտ կէս միլիոն դեսետին անտառ: Դա պէտք է բացատրել անտառների որոշ մասերի վերաբերմամբ տէրութեան և մասնաւոր անձերի կամ հաստատութիւնների մէջ իրաւունքների անդադար փոխանակութեամբ: Այսպէս օրինակ դեկտ. 28, 1889 թ. բարձրագոյն հրամայեց հիւս. կովկասի կուբանի շրջանում գտնուող 558,790 դեսետին անտառը ամբողջովին ընծաւաբերել կուբանի կազակների զօրքին:

¹⁾ Մի ռուսաց դեսետին հուլասար է 2400 քառակուսի սաժէնի կամ 21,000 քառակուսի արշինի. ֆրանսիական չափով դեսետինը հուլասար է 1,0925 ուրեմն մօտաւորապէս $1\frac{1}{10}$ հեկտար, կամ մօտ 2,1 անգլիական ակր:

Անտառալին ալդ մեծ հարստութիւնը, իրաւական տեսակէտից, պէտք է զանազան կատեգորիաների բաժանել, նրա մէջ, բացի զուտ դանձարանական անտառներից, կան և՛ գիւղացիական անտառներ (աւելի ճիշդ ասելով, ալնպիւիները, որոնցից ենթադրւած է մասեր հանելու նախկին տէրունական գիւղացիներին), և՛ ընդհանուր (որոնցից միաժամանակ օգտուում են և՛ մասնաւոր անձեր, կամ հաստատութիւններ և՛ ինքը-դանձարանը), և զեռ վիճելի անտառներ, և՛ զաղթականներին պատկանող անտառներ, և՛ եկեղեցապատկան անտառներ, և ալլն, և ալլն:

Կովկասում, զանձարանի կոնտրոլին ենթարկւած անտառների ընդհանուր հրապարակէն է, կոլոր թւով, 3.846,000 ղեսեաւտին: Ալդ մօտ 4 միլիօն ղեսեաւտին անտառից, որը բաղկացած է 565 առանձին, որոշ մասերից կամ կտորներից (сложных-ներից), 1.006,000 ղ. դարձեալ անպէտք պէտք է համարել վերոյիշեալ պատճառներով, քանի որ նրանք բռնւած են ապառաժներով, ճահիճներով, դետերով, և ալլն: Մնացած 3.840,000 ղեսեաւտինից—108,294¹/₂ ղ. համարւում է վիճելի մասնաւոր անձերի կամ հաստատութիւնների հետ. 159,000—ընդհանուր է, ըսն ըստ ան է. 947,500—գիւղացիական է (ալն մօտով, որ նրանք պէտք է բաժանեն տէրունական նախկին գիւղացիներին). 10,770—պատկանում է արքունի լեռնալին դարձարաններին, իսկ 229 ղ. տրւած է ժամանակաւոր կերպով մասնաւոր անհատների՝ որոշ պալմանների հիման վրա նրանից օգտուելու (эмпифтеутическо):

Ալդ ընդհանուր թւերը, որոնց ես բերում եմ անտառների վերաբերմամբ, պէտք է համարել ճիշդ միայն մօտաւորապէս, քանի որ նրանց իսկական հրապարակը բացորոշապէս չափւեալ է անտառների բարեկարգելուց լետով, Վերև լիւած 228 միլ. ղես. անտառից բարեկարգւած է (устроены) առ ալթմ, ալսինքնմինչև լունւարը 1892 թ., ընդամենն 14.481.000 ղ.: Անտառների ալդ բարեկարգութիւնը ճշդութեամբ ամեն տարի կատարւում է մօտ 50 ի չափ մասնագէտների խմբերով, ընդամենն 200 մարդուց բաղկացած, որոնք գործում են թէ Ռուսաստանում, թէ Սիբիրում և թէ մեզ մօտ, Կովկասում. 1891 տարւալը՝ ընթացքում, ալդպիսով, բարեկարգւած է Ռուսաստանում 261.249 ղ., իսկ մեզ մօտ Կովկասում—6786 ղ.:

Կարծում եմ հետաքրքիր են և հետեւեալ տեղեկութիւնները: Բոլոր պաշտօնական անձերի թիւը, որոնք հրաւիրւած էին հսկելու ալդ հարստութիւնների վրա—ալդ 1891 թ. հասնում էր 2754-ին. դրանցից 2288-ը, ուրեմն 83⁰/₀-ը, ունէր մասնապիտակաւ ուսում, որից 1253—բարձր, 485—միջին, 550—ցածր, իսկ 466-ը—նչ-մասնագիտական, որոնց մէջ բարձրագոյն ուսումով զուեւում էին դարձեալ 77 մարդ, միջին—154, ցածր—131. մնացած 104 ունէր, ինչպէս արտալաւուում է հաշիւը, տնալին կրթութիւն:

Դեպարտամենտի հաշիւը, առաջ բերելով այդ տեղեկութիւնները, հարկաւոր է համարել բաժան-բաժան անել այդ ծառայողների թիւը ըստ նոցա դաւանութեան: Եւ այդպիսով մենք իմանում ենք որ վերընշւած 2754 պաշտօնեաների մէջ 1772-ը դաւանում է ուղղափառ կրօնը, 660—կաթօլիկ, 44—հայ, 251—լութերական, 9-ը ալ բողոքական, 2—մենոնիտ, 8—մահմեդական և 8—հրէա: Այդ պաշտօնական անձերի թիւի մէջ (որոնք մի կողմից վերջանում են անտառապետների օգնականներով, իսկ միւս կողմից սկսւում մինիստրի ընկերով)—ես չը մոցրի չըջապահներին (ОБЪЕДИНЕН), որոնց թիւը հասնում է 29.779-ի: Կովկասում ծառայող չըջապահների թիւն է 2218: Շըջապահների մէջ, ընդհանուր առմամբ, 36°/օ-ը անգրագէտ է: Հաշւից իմանում ենք, որ 44 հաւերի մէջ, որոնք գտնւում են անտառալին ծառայութեան մէջ, 20-ը օգնականներ են, 15-ը անտառապետներ, իսկ մնացած—րէւիզորներ, տակստորներ և այլն: Վերջին տարիների հաշիւների մէջ դիտելի է, որ հաւ-օգնականների օ/օ-ը նկատելի կերպով աճում է ի հաշիւ անտառապետների. ուրիշ խօսքով, պաշտօնական այդ սանդղտի վրա—հաւ ծառայողներ տնեղիցիա են չալտնւում դէպի ստորին աստիճանների համար...

Ամբողջ Ռուսաստանում բոլոր անտառապետութիւնների թիւը հասնում է 755-ի, որոնցից 603—ընկնում է եւրոպական Ռուսաստանի վրա, 54-ը Վիսլիական երկրներին (լեհական թագաւորութեան), 71-ը—կովկասին, իսկ 27—Սիբիրին:

Հաշիւը, ապա, իր հաղորդած տեղեկութիւնների մէջ, թեթեւ մասնաւորում է: Փորձենք ներկայացնել նրան աւելի հետաքրքիր կերպով:

Անտառները, ինչպէս չալտնի է, անդադար փալտ են կորցնում իրանց միջից զանազան ճանապարհներով կամ ծախւելով, կամ փչանալով, կամ գողացւելով: Հաշիւ հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ այդ 91 թաւկանին օրինական տոմսերով ծախւած է 2.390.329 կուբիկական (խորանարդական) սաժեն թաց փալտ և 1.641.701 կ. ս. չոր, թափւած փալտ: Ընդամենն 4.032.030 կուբիկ. սաժեն: Աւելացրէք դրա վրա այն հազին հրդեհների վնասները, որոնք ամեն տարի, կասէք պարտաւորապէս, այցելում են անտառներին, ապա միջատների (КОРОБЛЕ-ների) հրաշագործութիւնները և ուրիշ ալ և ալ գրեթէ ճակատագրական կերպով անտառներից կորչող փալտերը,—և դուք շատ բնական կերպով կը հասնէք անտառապահութեան մէջ կանոնաւոր անտեսութեան մոցնելու մոքի անհրաժեշտութեանը: Հաշիւը չալտնում է, որ 1891 թ. փալտ գողացողների դէմ չարուցած գործերի թիւն է եղել 139.110, (որից Կովկասում 9574), իսկ անտառ հրդեհողների դէմ—4305: Միջատները փչացրել են 202.549 դեսիատին, իսկ քամիները վնաս են պատճառել 805.860 բուբուլ:

Բարերազգայնացի, ալի կորուստները միւս կողմից անդադար չլաց-
ւում են, 1891 թ., անտառապետների հաղորդած տեղեկութիւններից
երեւում է, որ նորից ծառակոխակ է, անտառոտակ է (ներքեք ալ բառի
համար՝ թարգմանում եմ ОБЪЕСИЛОСЬ (սօսքը) 49.241 դես. և անտառոտակ
է բնական ճանապարհով (естественно): Բացի բնական կերպով անտառ-
ների հարստանալուց՝ նրանք աւելանում են և ոչ բնական կերպով, այն
է արւեստապէս, տնկելով կամ ցանկելով: Ալի թւականին նորից տնկած է
(գլխաւորապէս հարաւային Ռուսաստանում) 1.862 դ.: 1891 թւականի
վերջին ընդամենն բոլոր տնկած անտառների հրապարակը հաշււում էր
67.038 դեսիատին:

Թէ անտառները տնկելու համար և թէ անտառապահութեան դործը
առաջ տանելու համար—սղաւում են Անտ. Ինստիտուտը և ուրիշ ցածր
մասնագիտական դպրոցներ թւով 10 հատ, որոնք վերջնում են ծախս—
200.000 ռուբլ: Պաշտօնեաների կորսուած նստում է 4.750.000 ռ.:

Կանգ չառնելով զանազան ծախսերի վրա,—ասենք, որ նրանց ընդ-
հանուր գումարն է 9.191.353 ռ.: Եւ որովհետեւ ընդհանուր եկամուտը
հասնում է 17.668.146 ռուբլու,—կը նշանակէ տէրութիւնը իր անտառ-
ներից ունեցել է զուտ եկամուտ ալի 1891 թ. 8.476.793 ռ.: Նոյնը
պէտք է ասել և միւս տարիների վերաբերմամբ:

Եթէ մենք ընդհանուր զուտ եկամուտը բաժանենք անտառների ընդ-
հանուր հրապարակի մեծութեան վրա,—կը տեսնենք, որ տէրութիւնը
իր իւրաքանչիւր դեսեատին անտառից եկամուտ ունեցել է տարեկան
միջին թւով 4,1 կոպէկ: Լաւ եկամուտ տալիս են հետեւեալ նահանգները.
Վարչաւայինը—8 ռ. 41 կ., Պետրոկովի—8 ռ. 86 կ., Ստաւրապոլինը—
5 ռ. 14, Իւրաքանչիւր դեսեատինից: Զուտ վնաս են տալիս Եկատե-
րինուպոլինը (մինուս 87 կ.), և ալլն:

Զեկուցումս աւարտում եմ, քաղելով մի քանի տեղեկութիւններ
Կովկասի մասին: Շատ տեղ չը բռնելու համար նրանց սեղմում եմ հետեւեալ
աղիւսակի մէջ:

	Ընդհանուր հրապարակը	Բացառապէս պիտանի հրապարակը	Զուտ օգուտ	Զուտ վնաս
1. Բազալ նահ. Գաղըս- տանի հետ միասին. .	425.053 դ.	292.328 դ.	—	3.555 ռ.
2. Գանձակի նահանգը .	695.128 "	413.760 "	70.749 ռ.	—
3. Ղարսի " .	130.634 "	108.199 "	159 "	—
4. Քութայի " .	441.172 "	288.700 "	—	25.041 "
5. Թիֆլիսի " .	510.757 "	450.033 "	1.764 "	—
6. Զերնոմորեան շրջանը	464.804 "	409.962 "	1.564 "	—
7. Երևանեան նահանգը.	152.996 "	67.766 "	—	15.239 "
8. Կոլքանի " .	584.480 "	313.529 "	2.024 "	—
9. Ստաւրապոլի " .	8.402 "	7.241 "	43.209 "	—
10. Թերեքի " .	324.604 "	267.797 "	—	27.032 "
Գումար է. . .	—	—	119.469 ռ.	70.867 "